**«Այ էֆ Փի» ՍՊԸ**
Ֆինանսական հաշվետվություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված
տարվա վերաբերյալ

**Երևան**
**Ապրիլ 2026**

Բովանդակություն


| | Էջ |
|---|---|
| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն | 3 |
| Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն | 4 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն | 5 |
| Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն | 6 |
| Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 7 |

*Այ Էֆ Փի ՍՊԸ*
***Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար***

| | Ծնթ. | 2025թ. հազ. դրամ | 2024թ. հազ. դրամ |
|---|---|---|---|
| Հասույթ | 5 | 125,209 | 58,931 |
| Ինքնարժեք | 6 | (99,443) | (72,497) |
| Համախառն շահույթ/վնաս | | **25,766** | **(13,566)** |
| Իրացման ծախսեր | | (3,838) | (1,044) |
| Վարչական ծախսեր | 7 | (17,596) | (10,392) |
| Ֆինանսական ծախսեր/վարձակալության տոկոս | | (2,036) | - |
| Այլ օգուտ (վնաս) | 8 | 100 | 41 |
| Անհատույց տրված ակտիվներ | | (160) | - |
| **Շահույթ մինչև հարկումը** | | **2,236** | **(24,961)** |
| Շահութահարկի գծով փոխհատուցում (ծախս) | 9 | 3,185 | 616 |
| **Տարվա շահույթ (վնաս)** | | **5,421** | **(24,345)** |

*Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2026թ. ապրիլի 21-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:*

***Աշոտ Բարսեղյան***

***Տնօրեն***

*Այ էֆ Փի ՍՊԸ*
*Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն առ 31 դեկտեմբեր 2025թ.*

| | Ծնթ. | 31.12.2025թ. հազ. դրամ | 31.12.2024թ. հազ. դրամ |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 10 | 14,257 | 16,826 |
| Վարձակալված ակտիվներ | 11 | 11,842 | - |
| Հետաձգված հարկային ակտիվ | 9 | 4,968 | 1,783 |
| | | **31,067** | **18,609** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 12 | 20,943 | 6,305 |
| Անավարտ ծառայություն | | 3,890 | 3,890 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 13 | 12,175 | 4,771 |
| | | **37,008** | **14,966** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **68,075** | **33,575** |
| **ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| **Սեփական կապիտալ** | | | |
| Կանոնադրական կապիտալ | 14 | 2,100 | 2,100 |
| Կուտակված շահույթ/վնաս | | (17,817) | (23,238) |
| | | **(15,717)** | **(21,138)** |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Վարձակալության գծով պարտավորություն | 11 | 5,399 | - |
| | | **5,399** | - |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Ստացված փոխառություններ | 15 | 43,707 | 37,991 |
| Վարձակալության գծով պարտավորություն | 11 | 7,200 | - |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 16 | 27,486 | 16,722 |
| | | **78,393** | **54,713** |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | | **68,075** | **33,575** |

*Այ Էֆ Փի ՍՊԸ*
*Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն*
*2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

| | Կանոնադրական կապիտալ | Չբաշխված շահույթ | Ընդամենը |
|---|---|---|---|
| | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.** | **2,100** | **1,107** | **3,207** |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | | | |
| Շահույթ և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար | - | (24,345) | **(24,345)** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **2,100** | **(23,238)** | **(21,138)** |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2025թ.** | **2,100** | **(23,238)** | **(21,138)** |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | | | |
| Շահույթ և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար | - | 5,421 | **5,421** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.** | **2,100** | **(17,817)** | **(15,717)** |

*Այ Էֆ Փի ՍՊԸ*
***Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն***
***2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար***

| | 31.12.2025թ. | 31.12.2024թ. |
|---|---|---|
| | **հազ. դրամ** | **հազ. դրամ** |
| ***Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր*** | | |
| Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ | 135,160 | 78,734 |
| Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից | (89,351) | (60,281) |
| Վճարումներ գնումների գծով | (14,929) | (11,082) |
| Վճարումներ այլ հարկերի գծով | (21,169) | (17,617) |
| Այլ ելքեր | (233) | (256) |
| ***Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ*** | **9,478** | **(10,502)** |
| ***Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր*** | | |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | (667) | (2,497) |
| ***Ներդրումային գործունեությունից ստացված, ներդրումային գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցներ*** | **(667)** | **(2,497)** |
| ***Ֆինանսավորման գործունեությունից դրամական հոսքեր*** | | |
| Փոխառության ստացում | 5,800 | 15,500 |
| Վարձակալության գծով պարտավորության մարում | (7,200) | - |
| ***Ֆինանսավորման գործունեությունից ստացված, ֆինանսավորման գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցներ*** | **(1,400)** | **15,500** |
| ***Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ*** | **7,411** | **2,501** |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | **(7)** | **(6)** |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքները առ 1 հունվարի | **4,771** | **2,276** |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի (ծնթ. 12)** | **12,175** | **4,771** |

*Այ էֆ Փի ՍՊԸ*
*Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ*
*2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

## 1. Հաշվետու կազմակերպություն

### ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

Այ էֆ Փի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) գրանցվել է Հայաստանի Հանրապետությունում 2013թ. հուլիսի 13-ին:

Ընկերության գործունեության վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի 49/2, 12-րդ հարկ: Ընկերությունը մատուցում է հետևյալ ծառայությունները՝

- աուդիտորական ծառայություններ,
- հաշվապահական, հարկային, տնտեսագիտական ծառայություններ,
- խորհրդատվական ծառայություններ:

Ընկերությունը հանդիսանում է Հայաստանի Աուդիտորների և Փորձագետ հաշվապահների Պալատի անդամ և գրանցված է Պալատի ռեեստրում (հիմնական գրառման համար՝ N 1 20 0330)՝ Պալատի 2020թ. դեկտեմբերի 24-ի N16-Ա որոշման համաձայն:

Ընկերության հիմնադիրներ և վերջնական վերահսկող կողմեր են հանդիսանում ՀՀ քաղաքացիներ՝

- Աշոտ Բարսեղյան,
- Քրիստինե Հովհաննիսյան,
- Ռոզա Հարությունյան

Կանոնադրական կապիտալը բաշխված է նրանց միջև հավասար մասերի, յուրաքանչյուրին մեկ երրորդի չափով:

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության աշխատողների քանակը կազմել է 18 աշխատող (2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 14 աշխատող):

### բ) Հայաստանի գործարար միջավայր

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որին բնորոշ է զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար:

Բացի այդ, շարունակական ռազմական հակամարտությունները Հայաստանի և Ադրբեջանի միջև, որոնց ավարտին Լեռնային Ղարաբաղի տարածքն անցավ Ադրբեջանի վերահսկողության ներքո 2023թ. սեպտեմբերին, և Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև շարունակվող ռազմական հակամարտությունը մեծացրել է անորոշությունը գործարար միջավայրում:

2025թ. օգոստոսին Հայաստանը և Ադրբեջանը ստորագրեցին համատեղ հռչակագիր, որով արտահայտեցին երկկողմ հարաբերությունները կարգավորելու փոխադարձ մտադրություն և որը ներառում էր հանձնառություններ ուղղված լարվածության նվազեցմանը, սահմանազատման շուրջ քննարկումների առաջխաղացմանը և տարածաշրջանում կայունության խթանմանը:

Այնուամենայնիվ, հոչակագրի գործնական իրականացումը և երկարաժամկետ ազդեցությունը տնտեսական գործունեության վրա մնում են անորոշ:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

## 2. Պատրաստման հիմունքներ և հաշվապահական հաշվառման քաղաքականություն

### ա) Համապատասխանության հավաստում

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի համաձայն:

### բ) Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

### գ) Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որն Ընկերության գործառնական արժույթն է և այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան չի նշվում:

### դ) Անընդհատություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

### ե) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթի այդ օրվա փոխարժեքով: Փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ կորուստը դրամային հոդվածների գծով իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբի դրությամբ գործառնական արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի, որը ճշգրտված է ժամանակաշրջանի արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսների և վճարումների մասով, և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված՝ արտարժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթի վերահաշվարկից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

| | 2025թ. դեկտեմբերի 31 | 2024թ. դեկտեմբերի 31 |
|---|---|---|
| ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար | 381.36 | 396.56 |

**զ) Հասույթի ճանաչում**

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները: Հասույթից նվազեցվում են հաճախորդների կողմից վերադարձվելիք գնահատված իջեցումները և նմանատիպ այլ նվազեցումներ:

*Ծառայությունների մատուցում*
Ծառայությունների մատուցումից ստացված հասույթը ճանաչվում է, երբ՝

- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն,
- հնարավոր է արժանահավատորեն որոշել հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը,
- հնարավոր է արժանահավատորեն որոշել գործարքի կատարման ժամանակ արված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

**է) Շահութահարկ**

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկի գծով ծախսը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

***i) Ընթացիկ հարկ***

Ընթացիկ հարկը հարկի այն գումարն է, որն ակնկալվում է վճարել կամ ստանալ տարվա հարկվող եկամտի կամ վնասի գծով՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ներառում է նախորդ տարիների համար վճարման ենթակա հարկի գծով ճշգրտումները:

***ii) Հետաձգված հարկ***

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլվելու նպատակով որոշվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկ չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը բիզնեսի միավորում չէ և գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական և ո՛չ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկի գումարը չափվում է կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ընթացիկ և հետաձգված հարկի գումարը որոշելիս Ընկերությունը հաշվի է առնում անորոշ հարկային դիրքերի ազդեցությունը, ինչպես նաև լրացուցիչ հարկերի, տուգանքների, ուշացված վճարումների համար տոկոսների գանձման հնարավորությունը: Ընկերությունը գտնում է, որ հարկային պարտավորությունների գծով հաշվեգրումները բավարար են բոլոր բաց հարկային տարիների համար՝ հիմք ընդունելով բազմաթիվ գործոնների իր գնահատականը՝ այդ թվում հարկային օրենսդրության մեկնաբանությունները և նախկին տարիների փորձը: Այս գնահատականը հիմնված է գնահատումների և ենթադրությունների վրա և կարող է ներառել մի շարք դատողություններ ապագա իրադարձությունների վերաբերյալ: Կարող է ի հայտ գալ նոր տեղեկատվություն, որը կարող է ստիպել Ընկերությանը փոխել իր դիրքորոշումը գոյություն ունեցող հարկային պարտավորությունների բավարար լինելու մասին: Հարկային պարտավորությունների նման փոփոխություններն ազդեցություն կունենան հարկային ծախսերի վրա այն ժամանակաշրջանում, որում կատարվել է գնահատականը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Ընկերությունն ունի ունի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և այդ հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկվող իրավաբանական անձից կամ տարբեր հարկվող իրավաբանական անձանցից, բայց նրանք մտադիր են մարումն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները միաժամանակ:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային զեղչերի և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որով հավանական է, որ Ընկերությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այն չափով, որով այլևս հավանական չէ, որ հետաձգված հարկային ակտիվից օգուտը կիրացվի:

**ը) Հիմնական միջոցներ**

***i) Ճանաչում և չափում***

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսումները, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսումները, ակտիվի զբաղեցրած տեղանքի վերականգնման ծախսումները և կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռքբերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես այդ սարքավորման մաս:

Եթե հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետներ ունեցող նշանակալի մասերից, այդ մասերը հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (խոշոր բաղկացուցիչներ): Հիմնական միջոցի միավորի օտարումից առաջացող օգուտը կամ կորուստը որոշվում է համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում է զուտ հիմունքով «այլ եկամուտ/այլ ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

*ii) Հետագա ծախսումներ*

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Ընկերությունը կստանա այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտներ և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

*iii) Մաշվածություն*

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և օգտագործման համար պիտանի դառնալու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և օգտագործման համար պիտանի դառնալու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած վերջինիս գնահատված մնացորդային արժեքը: Առանձին ակտիվների խոշոր բաղկացուցիչները գնահատվում են, և եթե բաղկացուցչի օգտակար ծառայության ժամկետը տարբերվում է ակտիվի մնացած մասերի օգտակար ծառայության ժամկետից, ապա այդ բաղկացուցչի մաշվածությունն առանձին է հաշվարկվում: Մաշվածությունը սովորաբար ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն ավելի ճիշտ է արտացոլում ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտների ստացման մոդելը: Ստորև ներկայացված են հիմնական միջոցների նշանակալի միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար:

| | |
|---|---|
| - տրանսպորտային միջոցներ | 8 տարի |
| - գրասենյակային և տնտեսական գույք | 5 տարի |
| - այլ հիմնական միջոցներ | 3-5 տարի |

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

**թ) Ոչ նյութական ակտիվներ**

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

**ժ) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ**

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

**ի) Առևտրային դեբիտորական պարտքեր**

Հիմնական վաճառքները կատարվում են վճարման սովորական պայմանների հիմունքով, և դեբիտորական պարտքերը տոկոսակիր չեն: Երբ պարտքը հետաձգվում է վճարման սովորական պայմաններով նախատեսված ժամկետներից, դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առևտրական և այլ դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքները վերլուծվում են՝ որոշելու համար, թե արդյոք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ գումարները փոխհատուցելի չեն: Եթե գումարները փոխհատուցելի չեն, արժեզրկումից կորուստը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

**լ) Առևտրային կրեդիտորական պարտքեր**

Առևտրական կրեդիտորական պարտքերը վճարման սովորական պայմանների հիմունքով պարտականություններ են և տոկոսակիր չեն:

**խ) Վարձակալություն**

***Ընկերությունը՝ որպես վարձակալ***

Վարձակալության ժամկետի մեկնարկի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում Ընկերությունը ֆինանսական վարձակալության շրջանակներում իր օգտագործման իրավունքները և պարտականությունները ճանաչել է որպես ակտիվ և պարտավորություն՝ վարձակալված գույքի իրական արժեքին հավասար գումարով կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի ցածր է: Վարձակալի ցանկացած սկզբնավորման ուղղակի ծախսում (լրացուցիչ ծախսումներ, որոնք ուղղակիորեն վերագրելի են վարձակալության շուրջ բանակցություններին և համաձայնության ձեռքբերմանը) ավելացվում են որպես ակտիվ ճանաչված գումարին:

Նվազագույն վարձավճարների ներկա արժեքը պետք է հաշվարկվել է՝ կիրառելով վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Ընկերությունը ֆինանսական վարձակալությամբ վարձակալված ակտիվի համար հաշվարկում է մաշվածություն (ամորտիզացիա)՝ համաձայն այդ տեսակի ակտիվի համար ՖՀՄՍ-ի համապատասխան բաժնի: Եթե խելամտորեն որոշակի չէ, որ վարձակալը վարձակալության ժամկետի ավարտին ձեռք է բերելու սեփականության իրավունքը, ապա ակտիվն ամբողջովին պետք է ամորտիզացվի վարձակալության ժամկետից կամ օգտակար ծառայության ժամկետից առավել կարճի ընթացքում: Վարձակալը պետք է նաև յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատի՝ արդյոք ֆինանսական վարձակալությամբ վարձակալված ակտիվը արժեզրկվել է:

***Ընկերությունը՝ որպես վարձատու***

Ընկերությունը չունի վարձակալության և ենթավարձակալության պայմանագրեր:

3. Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը կիրառել է ՓՄԿ-ների համար ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (IFRS for SMEs) թարմացված տարբերակը, որը հրապարակվել է Միջազգային հաշվապահական ստանդարտների խորհրդի կողմից և ուժի մեջ է մտել 2025 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակահատվածների համար:

Փոփոխությունները ներառում են թարմացումներ որոշ բաժիններում, մասնավորապես՝ ֆինանսական գործիքների, հասույթի ճանաչման և իրական արժեքի չափման վերաբերյալ:

Վերոնշյալ փոփոխությունների կիրառումը էական ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա:

## 4. Շահաբաժնի վճարման սահմանափակում

Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել ընկերության մասնակիցների միջև իր շահույթի բաշխման մասին կամ վճարել ընկերության մասնակիցներին շահույթ, եթե որոշման ընդունման պահին ընկերության զուտ ակտիվների արժեքը փոքր է նրա կանոնադրական կապիտալից և պահուստային ֆոնդից կամ այդ չափից փոքր կդառնա նման որոշման ընդունման արդյունքում:

## 5. Հասույթ

| | 2025թ. հազ. դրամ | 2024թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Աուդիտորական ծառայություններ | 58,443 | 31,981 |
| Հաշվապահական ծառայություններ | 66,766 | 26,950 |
| | **125,209** | **58,931** |

### Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթի մանրամասնեցում

Ստորև բերվող աղյուսակում հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը ներկայացված է ըստ ծառայություններից հասույթի ճանաչման ժամկետների:

| | 2025թ. հազ. դրամ | 2024թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Ժամանակի ընթացքում փոխանցված ծառայություններ | 125,209 | 58,931 |
| | **125,209** | **58,931** |

## 6. Ինքնարժեք

| | 2025թ. հազ. դրամ | 2024թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Աշխատակազմի գծով ծախսեր | 95,772 | 68,264 |
| Աուդիտի գործիքներ | 759 | 1,073 |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 153 | 359 |
| Մաշվածություն | 1,051 | 1,188 |
| Անդամավճար | 790 | 608 |
| Կադրերի վերապատրաստման ծախսեր | 918 | 1,005 |
| | **99,443** | **72,497** |

## 7. Վարչական ծախսեր

| | 2025թ. հազ. դրամ | 2024թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Աշխատակազմի գծով ծախսեր | 472 | 821 |
| Տարածքի վարձակալություն | 7,200 | 1,200 |
| Մաշվածություն | 2,185 | 2,185 |
| ՀՄ սպասարկման ծախսեր | 75 | 88 |
| Վառելիք | 423 | 492 |
| Գրասենյակային ծախսեր | 4,255 | 4,297 |
| Ապահովագրության ծախսեր | 1,917 | - |
| Հեռահաղորդակցության գծով ծախս | 1,024 | 994 |
| Բանկային ծախսեր | 45 | 70 |
| Այլ վարչական ծախսեր | - | 245 |
| | **17,596** | **10,392** |

## 8. Այլ օգուտ/(վնաս)

| | 2025թ. հազ. դրամ | 2024թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս) | 100 | 41 |
| | **100** | **41** |

## 9. Շահութահարկի գծով փոխհատուցում (ծախս)

| | 2025թ. հազ. դրամ | 2024թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Հետաձգված հարկի գծով փոխհատուցում | 3,185 | 616 |
| | **3,185** | **616** |

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները վերագրելի են ներքոնշյալին.

| **հազ. դրամ** | **Առ 1 հունվարի 2025թ.** | **2025թ. ֆինանսական արդյունքներում ճանաչված** | **Առ 31 դեկտեմբերի 2025թ.** |
|---|---|---|---|
| **Հետաձգված հարկային պարտավորություն** | | | |
| Հիմնական միջոցներ | **(173)** | (18) | **(191)** |
| Վարձակալված ակտիվ | - | (2,132) | **(2,132)** |
| **Հետաձգված հարկային ակտիվ** | | | |
| Վարձակալության գծով պարտավորություն | - | 2,268 | **2,268** |
| Կուտակված փոխհատուցելի արձակուրդ | **1,956** | 1,012 | **2,968** |
| Հարկային վնաս | - | 2,055 | **2,055** |
| **Ընդամենը** | **1,783** | **3,185** | **4,968** |

| հազ. դրամ | Առ 1 հունվարի 2024թ. | 2024թ. ֆինանսական արդյունքներում ճանաչված | Առ 31 դեկտեմբերի 2024թ. |
|---|---|---|---|
| **Հետաձգված հարկային պարտավորություն** | | | |
| Հիմնական միջոցներ | **(58)** | (115) | **(173)** |
| Վարձակալված ակտիվ | - | - | - |
| **Հետաձգված հարկային ակտիվ** | | | |
| Վարձակալության գծով պարտավորություն | - | - | - |
| Կուտակված փոխհատուցելի արձակուրդ | **1,225** | 731 | **1,956** |
| Հարկային վնաս | - | | - |
| **Ընդամենը** | **1,167** | **616** | **1,783** |

Հաշվետու տարվա համար ՀՀ հարկային օրենսգրքով շահութահարկի դրույքաչափը սահմանված է 18% (2024թ. - 18%):

## 10. Հիմնական միջոցներ

| | Տրանսպորտային միջոցներ<br>հազ. դրամ | Գրասենյակային և տնտեսական գույք<br>հազ. դրամ | Այլ հիմնական միջոցներ<br>հազ. դրամ | Ընդամենը<br>հազ. դրամ |
|---|---|---|---|---|
| ***Սկզբնական արժեք*** | | | | |
| **Առ 1 հունվարի 2024թ.** | **16,200** | **10,389** | **1,552** | **28,141** |
| Ավելացումներ | - | 2,497 | - | 2,497 |
| Նվազեցումներ | - | (50) | - | 50 |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **16,200** | **12,836** | **1,552** | **30,588** |
| Ավելացումներ | - | 667 | - | 667 |
| **Առ 31 դեկտեմբերի 2025թ.** | **16,200** | **13,503** | **1,552** | **31,255** |
| ***Կուտակված մաշվածություն*** | | | | |
| **Առ 1 հունվարի 2024թ.** | **968** | **8,970** | **739** | **10,677** |
| Ավելացումներ | 2,029 | 898 | 208 | 3,135 |
| Նվազեցումներ | - | (50) | - | (50) |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **2,997** | **9,818** | **947** | **13,762** |
| Ավելացումներ | 2,029 | 999 | 208 | 3,236 |
| **Առ 31 դեկտեմբերի 2025թ.** | **5,026** | **10,817** | **1,155** | **16,998** |
| ***Հաշվեկշռային արժեք*** | | | | |
| **Առ 1 հունվարի 2024թ.** | **15,232** | **1,419** | **813** | **17,464** |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **13,203** | **3,018** | **605** | **16,826** |
| **Առ 31 դեկտեմբերի 2025թ.** | **11,174** | **2,686** | **397** | **14,257** |

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գրավադրված միջոցներ չունի:

31.12.2025թ. դրությամբ Ընկերության հիմնական միջոցները, որոնք ներառված են ամբողջությամբ մաշված, բայց դեռևս օգտագործվող ակտիվների մեջ, կազմում են 9,189 հազ. դրամ (31.12.2024թ. դրությամբ՝ 9,110 հազ. դրամ):

## 11. Վարձակալություն

Ընկերությունը վարձակալության է իր գրասենյակի տարածքը:

### ա) Վարձակալված ակտիվ

| **հազ. դրամ** | **2025թ.** |
|---|---|
| Մնացորդն առ 1 հունվարի | - |
| Ավելացում | 17,763 |
| Տարվա մաշվածության գումար | (5,921) |
| **Մնացորդն առ 31 դեկտեմբերի** | **11,842** |

### բ) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

| **հազ. դրամ** | **2025թ.** |
|---|---|
| Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսներ | 2,036 |
| Տարվա մաշվածության գումար | (5,921) |

### գ) Վարձակալության գծով պարտավորություններ

| **հազ. դրամ** | **2025թ.** |
|---|---|
| Մնացորդն առ 1 հունվարի | - |
| Ավելացում | 17,763 |
| Վարձակալության գծով պարտավորությունների գծով տոկոսներ | 2,036 |
| Վարձակալության գծով պարտավորությունների մարում | (7,200) |
| **Մնացորդն առ 31 դեկտեմբերի, որից** | **12,599** |
| **Վարձակալության գծով պարտավորության կարճաժամկետ մաս** | **7,200** |
| **Վարձակալության գծով պարտավորության երկարաժամկետ մաս** | **5,399** |

## 12. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

| | **31.12.2025թ. հազ. դրամ** | **31.12.2024թ. հազ. դրամ** |
|---|---|---|
| ***Ֆինանսական ակտիվներ*** | | |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 19,552 | 3,600 |
| | **19,552** | **3,600** |
| ***Ոչ ֆինանսական ակտիվներ*** | | |
| Տրված կանխավճարներ | 1,150 | 633 |
| Տրված կանխավճարներ աշխատավարձի գծով | - | 144 |
| Հարկերի գծով | 241 | 1,928 |
| | **1,391** | **2,705** |
| | **20,943** | **6,305** |

2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր չմարված գումարները կարճաժամկետ են, ժամկետանց չեն և ընդհանուր առմամբ փոխհատուցելի են: 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստներն աննշան են: Առևտրային դեբիտորական պարտքերի միջին ժամանակահատվածը մինչև մեկ ամիս է (2024թ.՝ մինչև մեկ ամիս): Առևտրային դեբիտորական պարտքերն ապահովված չեն և նրանց նկատմամբ տոկոս չի հաշվարկվում:

## 13. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| | 31.12.2025թ. | 31.12.2024թ. |
|---|---|---|
| | **հազ. դրամ** | **հազ. դրամ** |
| Բանկային հաշիվներ, ՀՀ դրամով | 11,612 | 4,292 |
| Բանկային հաշիվներ, արտարժույթով | 319 | 235 |
| Դրամարկղ | 244 | 244 |
| | **12,175** | **4,771** |

## 14. Կանոնադրական կապիտալ

Կանոնադրական կապիտալը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 2,100 հազ. դրամ, ներառում է 50 հազ. դրամ անվանական արժեքով 42 բաժնեմասերի, որոնք ամբողջությամբ վճարված են:

## 15. Ստացված փոխառություններ

Ստացված փոխառությունները փոխկապակցված անձանց կողմից առանց գրավի ապահովման և անտոկոս ստացված փոխառություններ են, որոնց մարման առավելագույն ժամկետը 1 տարի է (2024թ. 1 տարի):

Ներքոնշյալ Ընկերության ստացած փոխառությունների մնացորդներն ու շարժն է՝

| | Արժույթ | 31.12.24թ. | Ավելացում | Փոխարժեքային տարբերություն | 31.12.25թ. |
|---|---|---|---|---|---|
| | | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ |
| Ստացված անտոկոս փոխառություն կապակցված կողմերից | ՀՀ դրամ | 37,991 | 5,800 | (84) | 43,707 |
| | | **37,991** | **5,800** | **(84)** | **43,707** |

## 16. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

| | 31.12.2025թ. | 31.12.2024թ. |
|---|---|---|
| | **հազ. դրամ** | **հազ. դրամ** |
| ***Ֆինանսական պարտավորություններ*** | | |
| Ծառայությունների գծով | 1,854 | 611 |
| Աշխատավարձի գծով | 26 | 145 |
| Փոխհատուցելի արձակուրդի գծով | 16,025 | 10,399 |
| | **17,905** | **11,155** |
| ***Ոչ ֆինանսական պարտավորություններ*** | | |
| Ստացված կանխավճար | 3,900 | 1,800 |
| Հարկերի և այլ պարտադիր վճարների գծով | 5,681 | 3,767 |
| | **9,581** | **5,567** |
| | **27,486** | **16,722** |

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների

մարման միջին տևողությունը կազմում է մինչև երկու ամիս:

## 17. Պայմանական պարտավորություններ

### 17.1 Ապահովագրություն

Ընկերությունը տրանսպորտային միջոցների համար ունի պարտադիր ապահովագրություն:

### 17.2 Դատական հայցեր

2025թ. դեկտեմբերի 31-ի և այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Ընկերության կողմից և Ընկերության դեմ հարուցված դատական հայցեր չեն եղել:

## 18. Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից:

## 19. Ֆինանսական գործիքներից բխող ռիսկեր

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը հակված է ֆինանսական գործիքներից բխող տարբեր ռիսկերի՝ շուկայական (ներառյալ՝ արժութային, տոկոսադրույքային, այլ գնային ռիսկերը), իրացվելիության և պարտքային: Ընկերությունը չի կիրառում ածանցյալ գործիքներ հեջավորելու նշված ռիսկերը:

### 19.1. Շուկայական ռիսկ

#### *19.1.1 Արժութային ռիսկ*

Արժութային ռիսկն այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են արտարժույթի փոխարժեքների փոփոխության հետևանքով: Ընկերության արժութային ռիսկը հիմնականում կապված է արտարժույթով արտահայտված կրեդիտորական պարտքերի և դրամական միջոցների հետ: 31.12.2025թ. դրությամբ Ընկերության ենթարկվածությունն արժութային ռիսկին ցածր է:

#### *19.1.2 Տոկոսադրույքային ռիսկ*

Տոկոսադրույքային ռիսկն այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են շուկայական տոկոսադրույքների փոփոխության հետևանքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության կապակցված կողմերից ստացված կամ նրանց տրամադրված փոխառությունները հաշվառվում են անվանական արժեքով, քանի որ նրանք ըստ բնույթի ցպահանջ փոխառություններ են:

### *19.1.3 Այլ գնային ռիսկ*

Գնային ռիսկն այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են շուկայական գների փոփոխության արդյունքում (բացի տոկոսադրույքային ռիսկից և արժութային ռիսկից առաջացողներից): Ղեկավարությունը գնահատում է, որ հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը էականորեն չի տարբերվում նրանց հաշվեկշռային արժեքից:

### 19.2. Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն այն ռիսկն է, երբ գործընկերների կողմից Ընկերության նկատմամբ իրենց պարտավորությունները չկատարելու արդյունքում Ընկերությունը կարող է կրել ֆինանսական կորուստներ: Պարտքային ռիսկն առաջանում է բանկային մնացորդներից, առևտրային և այլ դեբիտորական պարտքերից: Ընկերությունը նախորդ և հաշվետու տարիների ընթացքում չի ձևավորել առևտրային դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության գծով պահուստ, քանի որ ըստ Ընկերության ղեկավարության գնահատման, տվյալ ռիսկը հաշվետու ամսաթվի դրությամբ էական չէ:

### 19.3. Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, երբ Ընկերությունը դժվարություններ է ունենում այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվներ տրամադրելով:
Ընկերության ղեկավարությունը շարունակական մոնիտորինգ է իրականացնում Ընկերության իրացվելիության գծով՝ ապահովելու համար գործառնական գործունեության համար անհրաժեշտ դրամական միջոցների առկայությունը:

### 20. Գործարքներ կապակցված կողմերի հետ

| Կապակցված կողմ | Գործարքի տեսակը | 2025թ. հազ. դրամ | 2024թ. հազ. դրամ |
|---|---|---|---|
| Այլ կապակցված կողմ | ստացված փոխառություններ | 43,708 | 37,991 |

**Գործարքներ ղեկավարության հետ**

Հաշվետու տարիների ընթացքում Ընկերության ղեկավար անձնակազմին տրված հատուցումները հետևյալն են.

| | 2025թ. հազ. դրամ | 2024թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Աշխատավարձ և այլ կարճաժամկետ փոխհատուցումներ | 28,824 | 17,158 |
| | **28,824** | **17,158** |